Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Արամյան

_____

օգոստոս 2022 թ.

Հաստատված է
Դիլիջանի ավագ դպրոցի
Մանկավարժական խորհրդի նիստում
2022 թվական
Մանկ. Խորհդի Նախագահ Ա. Արամյան

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԳԻՏՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ
2022 - 2023 ՈՒՍՏԱՐԻ
ԲՆԱԳԻՏՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ
2022 - 2023 ուսումնական տարի
Դիլիջանի ավագ դպրոց
Մասնախմբի ղեկավար՝ Ն.Համբարձումյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԴԻԼԻՋԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

92. Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից:

93. Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:

94. Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝

1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ.

2) քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

4) նպաստում է ուսուցիչների (դասվարների) որակավորման բարձրացմանը.

5) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) նախապատրաստում է ատեստավորման.

6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

8) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

9) մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո դպրոցի տնօրենին ներկայացնում է առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ.

10) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

11) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ։

95. Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ։

96. Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են։

2022 – 2023 ուստարվա աշխատանքների վերլուծություն

Բնագիտմաթեմատիկական առարկաների մեթոդ միավորումը 2022 - 2023 ուսումնական տարում աշխատել է 11 հոգանոց խմբով : Խմբի ներսում տարաձայնություններ և կոնֆլիկտներ չեն եղել:Կատարվել է աշխատանքի բաժանում մեթոդ միավորման անդամների միջև՝ հաշվի առնելով նրանց կարողություններն ու ընդունակությունները :

2022 – 2023 ուսումնական տարում մեթոդ միավորումը իր աշխատանքները սկսել է օգոստոս ամսից՝ մեթոդ միավորման կազմի հաստատումով և աշխատանքային պլանի կազմումով: Ուսումնական տարվա ընթացքում աշխատել ենք փնտրել և գտնել դասի արդյունավետության բարձրացման ուղիներ, օգնել և սատարել ենք միմյանց: Տարեսկզբին առանձնացվել են նոր ուսումնական տարվա խնդիրները, որոնց իրագործման համար արվել է ամեն ինչ: Կիսամյակի սկզբից ստուգվել են թեմատիկ պլանները , հաստատվել : Ծրագրերի անթերի կատարման համար ստուգվել է թեմատիկ պլանների համապատասխանությունը մատյանի գրանցումներին , ծրագրի կատարողականը , թեմատիկ և գործնական աշխատանքների համապատասխանությունը պետական ծրագրերին : Շեղումներ և սխալներ չեն գրանցվել :Եղել են աննշան թերություններ , որոնք շտկվել են: Կիսամյակը մեկ անգամ ստուգվել են թեմատիկ պլանները , ակնհայտ սխալներ չեն նկատվել , եղել են թերություններ , որոնք շտկվել են:

Ուսումնական պրոցեսի գիտական կազմակերպման, դասի արդյունավետության,ուսուցչի տեսական-մանկավարժական մակարդակի բարձրացման նպատակով , կազմակերպվել են նոր դասագրքերի և ծրագրերի քննարկումներ , բաց դասեր, մանկավարժական զեկուցումներ , սեմինարներ :Ուսումնական տարվա ընթացքում եղել են նաև համակարգչային դասեր : Ուսումնասիրվել և քննարկվել են մի շարք նոր մեթոդներ, վեր են հանվել մեթոդների դրական և բացասական կողմերը: Նկատելի է որ , ուսուցիչները խորացրել են իրենց համակարգչային գիտելիքների իմացությունը : Առաջընթաց է նկատվել նաև օլիմպիադաներում : Դասի արդյունավետության բարձրացման նպատակով համալրվել են դիդակտիկ նյութերը , մի մասը նախաձեռնվել և իրականացվել է աշակերտներիր կողմից, դասեր են կազմակերպվել

համակարգչային սենյակում:Ուսումնասիրվել է ատեստացիա անցնող ուսուցիչների աշխատանքի համակարգը : Տարին հարուստ էր կազմակերպված միջոցառումներով , վիկտորինաներով :

Նոր ուսումնական տարվա աշխատանքների

Նպատակներն ու խնդիրները

Բնագիտամաթեմատիկական առարկաների (Մաթեմատիկա , քիմիա , կենսաբանություն, ֆիզիկա, աշխարհագրություն , ինֆորմատիկա) հետ միաժամանակ մասնախմբի մեջ են ֆիզկուլտուրան և ռազմագիտությունը :

Անհրաժեշտ է որակական նոր մակարդակի վրա բարձրացնել բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդումը դպրոցում : Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը ՝ ՀՀ Կրթության և Գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան : Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները : Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր մեթոդների կիրառմանը , աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը :Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական – մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ : Ուսումնասիրել և գործնականում կիրառել մանկավարժական նորագույն նվաճումները՝ ուսուցիչների փորձի փոխանակման, հաշվետվությունների և բաց դասերի միջոցով : Մանկավարժների գործունեության կարևոր խնդիրներից մեկը համարել՝ արդի մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտի իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը , ապահովել սովորողների առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը: Ավագ դպրոցի մասնագիտական հոսքային դասարաններում պրոֆիլային առարկաների դասավանդման բարձր մակարդակ ապահովել, նպաստել սովորողների կողմից նշված առարկաների լիարժեք յուրացմանը: Նպաստել էկոլոգիական տեսակետից անվտանգ ու անթափոն արտադրությունների անհրաժեշտության գիտակցմանը: Կազմակերպել հայրենասիրության, քաջության, հավատարմության դասեր: Այդ որակները սկիզբ են առնում աշակերտական նստարանից, սերունդներին դասավանդում են նվիրումի դասերով: Ավագ դպրոցի աշակերտների մեջ մեծացնել Միջազգային դպրոցում սովորելու ձգտումը, համարելով այն ցատկահարթակ միջազգային համբավավոր ուսումնական հաստատություններում սովորելու համար:Ավագ դպրոցի սովորողներին նախապատրաստել դպրոցականների առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների և կարողությունների զարգացման միջոցով:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները : Ինչևէ, բարդ ու բազմաբովանդակ է ուսուցիչների աշխատանքը : Մեկի աշխատանքը պայմանավորված է մյուսով , մեկի թերացումը մյուսի թերացումն է , մեկի հաջողությունը ՝ մյուսինն է : Ելնելով ուսուցչի աշխատանքային գործունեության ուսումնասիրության քարտի արդյունքներից ՝ մեր առջև խնդիր ենք դնում՝

- ավելի սերտ դարձնել համագործակցությունը ուսուցիչների միջև
- կատարել նպատակային փոխադարձ դասալսումներ
- կազմակերպել մեթոդական շաբաթներ
- հետևողական լինել օրվա պլանների պահանջներին
- կազմակերպել ինտեգրված դասեր
- ուսումնասիրել ուսուցիչներ առաջավոր փորձը և աշխատել դա կիրառել դասապրոցեսում
- պայմաններ ստեղծել աշակերտների կողմից կայուն գիտելիքների համար
- ստեղծել արտադասարանական աշխատանքների կայուն համակարգ
- ուսումնասիրել հերթական ատեստացիայի ներկայացված ուսուցիչների աշխատանքային գործունեությունը :
- հարստացնել և կահավորել ուսումնական կաբինետները և լաբորատորիաները :

2022 - 2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

№	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Կատ.պատաս խանատուն
1 .	2022 - 2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկան մեթոդ միավորման կազմի հաստատում:	2022 թվական օգոստոս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
2 .	Մեդալակիրների արդյունքների քննարկում:	2022 թվական օգոստոս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
3 .	Ուսումնական տարին սեպտեմբերի 1-ին սկսելու և առկա ուսուցում կազմակերպելու կարգի մասին,:	2022 թվական օգոստոս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
4.	2022 - 2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատկական մեթոդ միավորման նոր աշխատանքային պլանի քննարկում :	2022 թվական օգոստոս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
5.	Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկության ներկայացում մանկավարժական խորհրդին :	2022 թվական օգոստոս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
6	ԲՏՃՄ վերասպատրաստում անցած ուսուցիչների հետ կատարվելիք աշխատանքների քննարկում	2022 թվական օգոստոս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
7	Լաբորատորիայի առկայության ազդեցությունը ուսումնական պրոցեսի վրա	2022 թվական օգոստոս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
8.	Մեթոդական նամակների, երաշխավորությունների, ուսումնա-կան ծրագրերում փոփոխությունների մասին:	2022 թվական սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
9.	Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման 2022 – 2023 ուսումնական տարվա առարկայական թեմատիկ ծրագրային նյութերի առաջին կիսամյակի թեմատիկ պլանավորումների համապատասխանեցումը ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված ծրագրերին և չափորոշիչներին :Թեմատիկ պլանների	2022 թվական սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով

	հաստատում		
10.	2022–2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատիկական մեթոդ միավորման աշխատանքային ծրագրի հաստատման մասին,թեմատիկ և գործնական աշխատանքների քանակների հաստատում(10-12-րդ դաս.) (զեկուցող ՝ մասնախմբի ղեկավար Ն.Համբարձումյան)	2022 թվական սեպտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
11.	Առաջին քառորդի բնագիտամաթեմատկական մեթոդ միավորման առարկանների ուսումնական պլանի ուսումնական թեմատիկ պլանների կատարողականի ուսումնասիրությունը :	2022 թվական հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
12.	Բաց դաս և զեկույց 11-րդ դաս., ուսուցիչ Ա.Թովմասյան Թեմա՝ Ձևավորող գնահատումը 11-րդ դաս. մաթեմատիկա առարկայից	2022 թվական հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
13.	Կազմակերպել փոխադարձ դասալսումներ	2022 ուս.տարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
14.	Մնացորդային գիտելիքների ստուգում <<քիմիա>> առարկայից	2022 թվական հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
15.	.Առաջին քառորդի բնագիտամաթեմատիկական մեթոդ միավորման առարկանների ուսումնական պլանի ուսումնական թեմատիկ պլանների կատարողականի ուսումնասիրությունը :	2022 թվական Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
16.	Նախապատրաստվել հերթական վերապատրաստումների <<Առողջ ապրելակերպ>> առարկայի շրջանակներում:	2022 թվական Հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
17.	Մասնակցել շարունակական առարկայական ինչպես նաև <<Վերապատրաստումներ Տավուշում>> ծրագրի շրջանակներում առարկայական և մենթորական վերապատրաստումներին	2022 թվական հոկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
18.	.Առաջին քառորդի բնագիտամաթեմատկական մեթոդ միավորման առարկանների ուսումնական պլանի ուսումնական թեմատիկ պլանների կատարողականի ուսումնասիրությունը :	2022թվական նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով

19.	Բնագիտական առարկաներից թեմատիկ աշխատանքների համապատասխանությունը պետական ծրագրին:	2022 թվական նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
20.	Մեթոդական զեկուցում – Արա Արամյան	2022 թվական նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
21.	Պետական ավարտական քննությունների համար նախապատրաստական աշխատանքների իրականացում	2022 թվական նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
22.	Մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության, քիմիայի,ինֆորմատիկայի, աշխարհագրության ռազմագիտության առարկաներից հանրապետական օլիմպիադայի առաջին դպրոցական փուլի նախապատրաստում և անցկացում	2022 թվական նոյեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
23.	Բնագիտամաթեմատկական մեթոդ միավորման առարկանների ուսումնական պլանի ուսումնական թեմատիկ պլանների կատարողականի ուսումնասիրությունը :	2022 թվական դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
24.	Մեթոդական զեկուցում – Նարինե Համբարձումյան	2022 թվական դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
25 .	Բնագիտամաթեմատիկական առարկաների առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	2022 թվական դեկտեմբեր	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
26.	2022 - 2023 ուսումնական տարվա բնագիտամաթեմատկական մեթոդ միավորման առարկանների երկրորդ կիսամյակի դասաբաշխման քննարկումը:	2023 թվական հունվար	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
27.	Պետական ավարտական քննությունների արդյունքների քննարկում	2023 թվական հունվար	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
28.	ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների առաջին և երկրորդ փուլերի հաղթողների հետ հավելյալ աշխատանքների կազմակեպման մասին :	2023 թվական փետրվար	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով

29.	Մեթոդական զեկուցում Սուսան Սարուխանյան՝ <<Առանց դաս պատմելու դաս-ուսուցման մեթոդներ>> թեմայով	2023 թվական փետրվար	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
30.	Օլիմպիադաների արդյունքների ամփոփում	2023 թվական մարտ	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
31.	Էլեկտրոնային մատյաններում գրանցումների համապատասխանության ստուգում	2023 ուս.տարվա ընթացքում	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
32.	Մեթոդական զեկուցում – Ա. Մանուկյան՝ << Կիբերանվտանգություն >> թեմայով	2023 թվական ապրիլ	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
33.	Երկրորդ կիսամյակի կիսամյակային գնահատականների համապատասխանության հաղորդում	2023 թվական մայիս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
34.	10 և 11-րդ դասարանցիների փոխադրական քննությունների կազմակերպում	2023 թվական հունիս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
35.	12-րդ դասարանցիների ավարտական քննությունների արդյունքների ամփոփում	2023 թվական հունիս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
36.	10 և 11-րդ դասարանցիների փոխադրական քննությունների արդյունքների ամփոփում	2023 թվական հունիս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
37.	2022-2023 ուստարվա կատարած աշխատանքների ամփոփում	2023 թվական հունիս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով
38.	ԲՏՃՄ հանձնախմբի ուսուցիչների նախնական դասաբաշխում	2023 թվական հուլիս	Տնօրենի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով